

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

**2014-2015 ուստարվա ՀՀ դպրոցականների <<Կենսաբանություն>> առարկայի
օլիմպիադայի կազմակերպման և անցկացման**

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2014-2015 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների <<Կենսաբանություն>> առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն Ընթացակարգով սահմանված Հավելվածների ձևանմուշները և Օլիմպիադայի վերաբերյալ այլ տեղեկություններ տեղադրված են olymp.am կայքում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով:
4. Օլիմպիադան անցկացվում է երեք խմբերով.
I խումբ՝ 9-րդ դաս., II խումբ՝ 10-րդ դաս., III խումբ՝ 11-12-րդ դաս.:
5. Ցածր դասարանում սովորողը կարող է մասնակցել ավելի բարձր խմբի սովորողների օլիմպիադային:
6. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:
7. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել կենսաբանություն առարկայի մասնագետներ:
8. Առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
9. Դպրոցի տնօրինությունը մինչև 2015 թ. հունվարի 30-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ Հավելված 1-ի ներկայացնում է մարզպետարան /քաղաքապետարան/:
10. Մարզային վարչությունը մինչև 2015թ. փետրվարի 3-ը ներառյալ մասնակիցների ցուցակները ըստ հավելված 2-ի ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ info@olymp.am հասցեով:
11. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է olymp.am կայքում:
12. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2015 թ. փետրվարի 12-ին ժամը 12:00-ին:
13. Դպրոցի տնօրինությունը պատասխանների լրացված ձևաթղթերը հանձնում է մարզային կրթության վարչություն, նույն օրը մինչև ժամը 18:00:
14. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը դպրոցներից ստացված պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է ՀՀ ԿԳՆ, մինչև փետրվարի 16-ը ժամը 18:00:
15. Օլիմպիադայի երկրորդ /մարզային/ փուլն անցկացվում է մարզկենտրոններում:
16. Օլիմպիադայի երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:
17. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2015թ. մարտի 7-ին՝ սկիզբը՝ ժամը 10:00-ին:
18. Օլիմպիադայի երկրորդ և երրորդ փուլերի տարբերակները՝ ըստ դասարանների, կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:

19. Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքները ստուգում է մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ կողմից ստեղծված առարկայական հանձնաժողովը:
20. Երկրորդ փուլի հաղթողները պարզևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:
21. Օլիմպիադայի երկրորդ փուլի մասնակիցների ցուցակները և ստացած միավորները (ըստ Հավելված 3-ի) մարզպետարանի /Երևանի քաղաքապետարանի/ համապատասխան վարչությունը մինչև 2015թ. մարտի 11-ը ներկայացնում է հանրապետական կազմկոմիտե՝ info@olymp.am էլեկտրոնային հասցեով:
22. Օլիմպիադայի առաջին և երկրորդ փուլերի առաջադրանքները, պատասխանների ձևաթղթերը և արդյունքները տեղադրվում են olymp.am կայքում:
23. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է Երևան քաղաքում՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված վայրերում:
24. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2015 թ. մարտի 22-ին և 23-ին սկիզբը՝ ժամը 10:00-ին:
25. Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:
26. Երրորդ փուլի հաղթողները պարզևատրվում են ՀՀ ԿԳ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով:
27. Օլիմպիադայի երրորդ փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրները համարվում են <> առարկայի միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ:
28. Տեղեկությունները կարելի է ստանալ olymp.am կայքից